ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԱՆՏԻՊ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Գ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Հայ միջնադարյան խոշոր բանաստեղծ Ներսես Շնորհալու գրչին են պատկանում երեք հարյուրից ավելի հանելուկներ, որոնցից տպագրված են միայն 120-ը։ Շուրջ երկու հարյուր հանելուկ դեռ մնում են ձեռագրերում։ Առաջին անգամ Շնորհալու այս անտիպ հանելուկների մասին 1951 թվականին, «Էջմիածին» ամսագրում[1] հանդես է եկել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական աշխատող բանասեր Փ. Այնթափյանը։ Այս փոքրիկ, բայց արժեքավոր հոդվածում հեղինակը առաջ է քաշել նոր ու հետաքրքիր հարցեր Շնորհալու անտիպ հանելուկների վերաբերյալ։ Մի քանի ձեռագրերից մեջ բերված համապատասխան հանելուկների հիման վրա վեր է հանվել Շնորհալու բացասական վերաբերմունքը ժամանակի սոցիալական կյանքում գոյություն ունեցող անարդարությունների ու արատների նկատմամբ և ընդհակառակը նրա սերն ու համակրանքը՝ աշխատանքի, աշխատավորի և բնության ու իրական կյանքի հանդեպ։ Ձկնորսի, ցորենի, լուսնի, մորեխների, աքլորի և այդու մասին գրված հանելուկների օրինակով Այնթափյանը ցույց է տալիս, թե Շնորհալին որքան լավ է ճանաչել կյանքը և այն գեղարվեստորեն դրսևորել բազմաթիվ հանելուկներում։ Սակայն դժվար է համաձայնել հեղինակի այն մտքի հետ, թե Շնորհալու «հանելուկների մեծ մասը հրատարակված է»։ Մեր պրպտումները ցույց են տալիս, որ հրատարակված է Շնորհալու հանելուկների միայն մեկ երրորդը, իսկ մեծ մասը դեռևս անտիպ է (տե՛ս Մատենադարանի №№ 7703, 3421, 2961, 6045, 695 և այլ ձեռագրերը)։ Այնուհետև, հոդվածում արծարծվել է այն կարծիքը, որ Շնորհալու խոհական բնույթի հանելուկները իրենց վրա չեն կրում «ժողովրդական դրոշմը»՝ ինչպես մյուս հանելուկները։ Իհարկե, այդպես չէ։ Բացի Հին ու Նոր կտակարաններից վերցված թեմաներով գրված կրոնական հանելուկներից, որոնք շատ քիչ են, մնացած բոլոր աշխարհիկ բնույթ կրող հանելուկների նյութը վերցված է ժողովրդի կյանքից, գրված է նրա հոգուն հարազատ բառ ու բանով։

Հասկանալի է, որ իր փոքրիկ հոդվածում Այնթափյանը չէր կարող հանգամանորեն խոսել Շնորհալու անտիպ հանելուկների հետ կապված բազմաթիվ խնդիրների մասին, ինչպես նրանց կազմության, ժամանակի, ձևի ու բովանդակության, ժանրային առանձնահատկությունների և այլ կողմերի մասին։ Մեր հոդվածի նպատակն է՝ մի կողմից ավելի լայնացնել ու խորացնել Շնորհալու անտիպ հանելուկների կապակցությամբ առաջ քաշված խնդիրները՝ նոր փաստերով ու մտքերով, իսկ մյուս կողմից՝ մեր ուժերի ներածին չափ վեր հա-

---

[1] «Էջմիածին», 1951, № 10, էջ 61—64։

նել այդ հանելուկների գաղափարական և գեղարվեստական արժեքն ու նշանակությունը։

Ներսես Շնորհալին իր արվեստով սերտորեն կապված է եղել ժամանակի հետ։ Այս տեսակետից արժեքավոր են նրա տպագրված, ինչպես և անտիպ հանելուկները։ Հանելուկների ժանրը մեր հին գրականության մեջ հայտնի է առակ-առակք, առեղծուած, առասպել անուններով։ Շնորհալուն պատկանող հանելուկները ևս կոչվել են «Առակք վասն ուրախութեան մարդկան»։ «Առակք» բառը այստեղ չպիտի հասկանալ արդի իմաստով,— բացատրում է պրոֆ. Մ. Արեղյանը,— այլ իբրև «հանելուկներ»[2]։ Շնորհալին իր հանելուկների նյութը մեծ մասամբ վերցրել է ժողովրդական անգիր բանահյուսության հարուստ գանձարանից և մասամբ՝ Հին կտակարանից։ Մեր միջնադարյան գեղարվեստական գրականության մեջ առաջին անգամ նա է ստեղծում գրավոր հանելուկները որպես գրական նոր տեսակ։ Այդ հանելուկները վկայում են, թե Շնորհալին որքան մոտիկից ու լավ է ճանաչել իրական կյանքը և գեղարվեստորեն վերարտադրել այն։ Սակայն Շնորհալու հանելուկների մեծ մասի միայն նյութը չէ, որ ժողովրդական է, ժողովրդական են նաև դրանց պատկերները, մտածողության, երևակայության ձևերը և լեզուն։

Իր շափածո գործերի մեծ մասը Շնորհալին գրել է ուսուցողական նպատակով, ժողովրդի համար և «մեկին» լեզվով։ Թեև հանելուկներից մի քանիսը (որոնց նյութը վերցված է Հին ու Նոր կտակարաններից) գրված են գրաբար, բայց դրանք շատ քիչ են և արվեստի տեսակետից էլ՝ թույլ։ Շնորհալու հանելուկների մեծ մասը այլաբանորեն, փոխաբերական հակիրճ խոսքով արտահայտում է օբյեկտիվ իրականությունը և ունի պատմական-ճանաչողական արժեք։ Շնորհալու հանելուկները հիմնականում արտացոլում են հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած հասարակական, տնտեսական, կենցաղային-հոգեբանական և սոցիալ-դասակարգային տարբեր երևույթները։

Իր հանելուկներով Շնորհալին նպատակ է ունեցել պահպանել ու տարածել ազգային բանահյուսական մշակույթը, որպեսզի ժողովուրդը ազատ և ուրախ ժամերին՝ խնջույքների, հարսանիքների ժամանակ զբաղվի ոչ թե անմիտ կամ վնասակար իմաստ ունեցող զրույցներով, առասպելներով, այլ հայրենի հանելուկներով, որոնց հիմքում դրված են սրամտություն զարգացնելու, բարոյա-կրթական և հայրենասիրական նպատակներ։ Որ Շնորհալին այդ միտումով է գրել հանելուկները, հաստատում է նաև պատմարան Կիրակոս Գանձակեցին. «Եւ զի յամենայնի հանճարեղն էր Ներսէս, արար և առակս խորհրդաբար ի գրոց, զի փոխանակ առասպելեացն՝ զայն ասասցեն ի գինարբուս և ի հարսանիս...»[3]։

Մի ժամանակ հոգևորական բանասերների մեջ տարակուսանք ու կասկածներ են եղել այն մասին, որ դժվար թե հայոց հայրապետը պատշաճ համարեր գրել հանելուկներ, այն էլ մեծ մասամբ ոսամիկ նյութով ու ոսամիկ լեզվով։ Այդ տարակուսանքներից էլ բխում էր մեկ ուրիշ ենթադրություն. իբր թե հանելուկները Շնորհալին գրել է նախքան կաթողիկոս ընտրվելը, թերևս երիտասարդ տարիքում։ Այս թյուր կարծիքը հերքվում է նույն Կիրակոս Գանձակեցու մեկ

2 Մ. Ա ր ե ղ յ ա ն, Հայոց հին գրականության պատմություն, հատ. II, էջ 94։

3 Կ. Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1911, էջ 140—141 (ընդգծումները մերն են — Գ. Հ.)։

ուրիշ վկայությամբ. հաջորդականությամբ թվելով Շնորհալու մի շարք գործերը, նա միայն վերջում է հիշատակում հանելուկների մասին. «Վասն այնորիկ արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զրերդն, զի փոխանակ վայրապար ձայնիցն զայն ասասցեն, որոյ սկիզբն է սաղմոսն Դաւթի, Յիշեսցի ի զիշերին և զա... և այսպէս խորհրդաբար ըստ կարգի Զարթիր փառք իմ, որ այժմ ասի յեկեղեցի ի ժամ զիշերային պաշտաման...»[4]։ Եվ ապա գրում է հանելուկների մասին վերևում մեջ բերված տողերը. «արար առակս խորհրդաբար ի դրոց...» և այլն։ Հանելուկների մասին խոսելուց անմիջապես հետո Գանձակեցին նշում է Ներսես Շնորհալու մահը և նրան փոխարինող Գրիգոր Տգայի մասին. «Եւ յետ նորա յաջորդէ զաթոռն Գրիգոր ամս քսան...»[5]։ Այսպես ուրեմն, Շնորհալին «Յիշեսցուք» և «Զարթիր» երկու երգը գրել է Հռոմկլայում կաթողիկոս եղած ժամանակ, իսկ հանելուկները գրել է դրանցից հետո, բայց թեև կոնկրետ ո՞ր տարին, առայժմ դժվար է ասել, և հարցի սկզբունքային լուծման տեսակետից էլ կոնկրետ տարեթիվը կարևոր նշանակություն չունի։

Ընդունված է Շնորհալուն վերագրել միայն 129 հանելուկ[6]։ Սա, իհարկե, չի համապատասխանում իրականության։ Ինչպես հիշվեց, մեր բազմաթիվ ձեռագրերում գրված են շատ հանելուկներ, որոնք պատկանում են Ներսես Շնորհալուն, որոնց մեծ մասը չի մտել հրատարակվածների[7] մեջ։ Դրանց մեջ կան նաև այնպիսիները, որոնք թեև վերագրվել են Շնորհալուն, բայց նրա գրչին չեն պատկանում։ Ահա 1724 թ. Կ. Պոլսում հրատարակված «Երգոյկս, որ ասի հանելուկք, զոր արարեալ է Տեառն Ներսէսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի վասն ուրախութեան մարդկան» գրքից մի բնորոշ բառյակ, որը գրվել է Շնորհալու մահից հետո՝ նրան ներբողելու և մեծարելու համար.

Իշխան մի նաւ յեկեղեցի,
Ի ի ձայրագոյն աստիճանի.
Բան զոր չեղն ոք աւելի
Երգիչ տաղի շարականի։

Իրավացի է Գ. Զարբհանալյանը, երբ նշում է, թե այս հանելուկի հեղինակը «ազգային յետ դարուց բերթող մրն» է, որի գրածը անզգուշորեն վերագրվել է Շնորհալուն[8]։

Ավանդաբար ընդունված է եղել նաև այն կարծիքը, որ Շնորհալու բոլոր հանելուկներն էլ, իբր, կարճ բառյակներ են, բացառությամբ մեկի՝ «Աշխարհ»

4 Կ. Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 111։

5 Նույն տեղում, էջ 141։

6 Ղ. Ալիշան, Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 560—584 և Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հատ. Բ, էջ 94։

7 Ահա Շնորհալու տպագրված հանելուկների ցուցակը ըստ Հ. Ղ. վ. Հովնանյանի. 1. «Երգոյկս, որ ասի Հանելուկք զոր արարեալ է Տեառն Ներսէսի Կլայեցւոյ Հայոց կաթողիկոսի վասն ուրախութեան մարդկան», Կ. Պոլիս, 1724։ 2. «Ողբ Սգեսիոյ», Փարիզ, 1828 (վերջում կցված են 25 հանելուկներ՝ «Ակեղծուածք ինչ ի վերագրելոցն սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ» վերնագրով)։ 3. «Բանք չափաւ», Վենետիկ, 1830, 120 հանելուկ։ 4. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա, 1858, 48 հանելուկ։ 5. «Բազմավէպ», 1848—1851 թթ. համարներում։ 6. «Արեգակ» (օրագիր), 1897, Նյու-Յորք։

Չմոռանանք ասել, որ այս տարբեր հրատարակությունների մեջ եղածները մեծ մասամբ այն հանելուկներն են, որոնք տեղավորված են «Բանք չափաւ» գրքի վերջում (էջ 560—584)։

8 Գ. Զարբհանալյան, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897։ էջ 639։

հանելուկի («Պանդուկ մի կայր» և այլն), որը բաղկացած է 2 քառյակից։ Այս սկզբունքով էլ ընտրվել և հրատարակվել են Շնորհալուն վերագրվող հանելուկները[9], որոնք բոլորն էլ գրված են քառյակներով։ Արդյո՞ք ճիշտ է նման մոտեցումը։ Այդ հարցին պատասխանելու համար դիմենք տարբեր ձեռագրերում պահպանվող Շնորհալու բազմաթիվ հանելուկների կազմությանը։ Մի ձեռագրում լուսնի վերաբերյալ հանելուկը բաղկացած է միայն երկու տողից.

Առաւօտեան եւ մթընիկ
Երեկոյեան ծագեաց լուսիկ[10]։

Մի ուրիշ ձեռագրում «Ձուկ» հանելուկը բաղկացած է երեք տողից.

Ջամկն խաղայ ու է գնայուն,
Հանց սուր երթայ քան թըռչուն,
Երբնաւ չանկնի իր աչքն ի քուն[11]։

Խնոցի պատկերող հանելուկն ունի հինգ տող.

Շինեցին զնա ի հողէ.
Յօրինեցին ի կրակէ,
Հանին ի կառոն փայտեղէն,
Եւ խոցեցին ի յաջ կողէն,
Եւ շատք արբին իր արիւնէն[12]։

Նույնպես իրական կյանքից վերցված հետևյալ հանելուկը բաղկացած է 6 տողից.

Նոր զարմանք սքանչելեաց,
Զոր միս սինն մեզ պատմեաց,
Մինն պտղոցն էր փափաքած,
Մինն կնոջն էր կարօտած,
Նա որ զնախնիքն մեր խաբեաց,
Զերկուսն ի մէկ ծառէ կախեաց[13]։

«Պանդուկ մի կայր» տպագրված հանելուկը բաղկացած է ութ տողից[14]։ Այնպիսիներ էլ կան, որոնք կազմված են տասը և ավելի տողերից։ Հիշենք «Ամպ» հանելուկը (տասներկու տող)[15], «Հողմը»՝ (քսանչորս տող)[16] և այլն։ Ինչպես տեսնում ենք, Շնորհալին հանելուկներ գրել է ոչ թե միայն քառատողերով, այլ սկսած երկու տողից մինչև քսան և ավելի տողերով։

Շնորհալու անունից հանելուկներն իրենց բնույթով բաժանվում են երկու խմբի՝ կրոնական և աշխարհիկ։ Առաջին խմբին պատկանող հանելուկները, ինչպես ասացինք, թվով շատ քիչ են ու կյանքից կտրված, ունեն միայն վերա-

9 *«Բանք չափաւ», էջ 560—590։*
10 *Հայաստանի Պետական Մատենադարան, ձեռ. № 3421, էջ 329։*
11 *Նույն տեղում, ձեռ. № 7703, էջ 92։*
12 *Նույն տեղում, էջ 104։*
13 *Նույն տեղում։*
14 *«Բանք չափաւ», էջ 584։*
15 *Մատենադարան, ձեռ. № 7703, էջ 104բ—105։*
16 *Նույն տեղում, էջ 105—105բ։*

ցական իմաստ։ Այդպիսիներից են Հին ու Նոր կտակարաններից վերցված թեմաներով հանելուկները։ Պետք է նշել, սակայն, որ կրոնական բնույթի որոշ հանելուկների մեջ իրական գծերով և համարձակ կերպով պատկերված են անգամ բիբլիական և կրոնական որոշ անձնավորությունների պակասությունների ու բացասական կողմերը։

Անհամեմատ շատ են աշխարհիկ բովանդակությամբ ձեռագիր հանելուկները, որոնց զգալի մասը վերաբերում է բնությանը և նրա հետ կապված երևույթներին։ Շնորհալին սիրել է բնությունը, որից նա ընդհանրապես գույներ ու պատկերներ է վերցրել իր մտքերն ու զգացմունքներն ընթերցողին հասցնելու համար։ Սակայն հանելուկների մեջ նա աշխատել է այլաբանորեն և սրամիտ կերպով ժողովրդին ծանոթացնել նաև բնությանը և նրա հետ աղերսվող երևույթներին։ Մարդու կյանքը բազմաթիվ թելերով կապված է բնության երևույթների հետ. ջերմությունն ու ցուրտը, փայլակն ու որոտը, ամպն ու անձրևը, կարկուտն ու հեղեղը, հողն ու ջուրը՝ այս ամենը կարևոր դեր են խաղացել մարդկության հոգեկան և տնտեսական կյանքում. մարդիկ ձգտում են հասկանալ այդ ամենը և որոշ չափով ճանաչել աշխարհը։ Հաշվի առնելով մարդու այդ ցանկությունն ու ճաշակը, Շնորհալին կարողացել է վարպետորեն կառուցել հետաքրքիր հանելուկներ, որոնք պետք է որոշ չափով դային բավարարելու իր ժամանակի մարդու հետաքրքրասիրությունը։ Օրինակ, «Արեւը» Շնորհալին կապել է հայոց այբուբենի հետ ըստ ժամանակի աստղաբաշխական հասկացողության.

Նա բարձրանայ այրեն ի վէն
Եւ խոնարհի դառնալ անդրէն.
Ամէն գրի բերգ որ լուսմէն,
Երևայ ըզկէց ամիսն ամէն

Արեգակի հետ միասին աստղերն էլ են դարձել հանելուկի նյութ։ Ժամանակի պատկերացմամբ՝ ավազն ու ջուրը վեր են բարձրացել երկինք, ամուր կպել երկնի կամարին, ավազի հատիկները լցվել են երկնային բոցերով և որպես աստղեր լույս են տալիս աշխարհին՝ մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից պայծառ։ Ըստ հանելուկի՝ այդպես էլ գոյացել են աստղերը։

Ջառ ի վեր ջուրն է մեկնած,
Ներքոյ ամուր առ զով փակած.
Աւազն ամէն հրով լցած,
Մի բան զմի պայծառացած[18]:

Վերը բերված և այդ բնույթի մյուս հանելուկները մեզ հնարավորություն են տալիս որոշ չափով գաղափար կազմելու բնության երևույթների վերաբերյալ ժամանակի մարդու ունեցած հասկացողությունների և պատկերացումների մասին։

«Աղուհացից» կոչվող շարականների բաժնում Շնորհալին ունի «անիրավ դատավորին» վերաբերող մի շարական. թեև շարականի նյութը վերցված է Նոր կտակարանում եղած առակներից, բայց բանաստեղծության նպատակն է եղել

17 Մատենադարան, ձեռ. № 3421, էջ 328։

18 «Տաղարան և ուրբաթագիրք», Վենետիկ, 1513, էջ 52։ Տե՛ս նաև №№ 7703 և 3421 ձեռագրերում։

երգողի և ժամավորի մեջ բացասական զգացմունք առաջացնել գեպի անիրավությունն ու անարդարությունը, որոնք կատարվում են իրական, աշխարհիկ կյանքում, և այս է արժեքավորը այդ շարականում։ Զեռագրերում պահվող Շնորհալու հանելուկներից մեկը նույնպես վերաբերում է «անիրավ դատավորին».

Կայր դատաւոր մի անիրաւ,
Ամենայն երգողդրն, տաներ իրաւ,
Օվկիանոս ծով խեղդեցաւ,
Տանջի որբով և խաւարաւ19։

Այս հանելուկի նյութը արդեն ոչ մի կապ չունի Հին կամ Նոր կտակարանների հետ, վերցված է իրական կյանքից, արժեքավոր է այն տեսակետից, որ նախ՝ ոչ մի բանով չի առնչվում կրոնի հետ և երկրորդ ավելի որոշ է խարազանում անիրավությունն ու ճշմարտության ոտնահարումը։ Այստեղ հեղինակը չի բավականանում հանելուկը լուծողի և լսողների մեջ միայն տեսություն առաջացնելով գեպի անիրավ պաշտոնյան, այլ ցանկանում է, որ նա պատժվի, խեղդվի օվկիանոսում կամ այրվի հրով։ Ըստ շարականի՝ օրինապանցը պատիժը պիտի կրի երկնքում, իսկ հանելուկում՝ այդ պատիժը պիտի տեղի ունենա երկրում, ծովի կամ կրակի միջոցով։

Զեռագիր հանելուկների մեջ քիչ չեն այնպիսիները, որոնք պատկերում են մարդկանց իրական կյանքը, կենցաղը, երկրագործական աշխատանքը և վերջինիս հետ կապված զանազան գործիքներն ու առարկաները։ Այս խմբի հանելուկները գլխավորապես արտացոլում են ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի զանազան կողմերը, որով և պայմանավորված է նրանց ճանաչողական արժեքը։ Երկրագործական աշխատանքների հետ մարդկանց ավելի սերտ կապելու, գեպի աշխատանքը սեր առաջացնելու նպատակով հորինված են մի քանի գեղեցիկ հանելուկներ։ Երկրի վրա ամենից շատ բարիք տալիս է այգին. նա նման է բազմազավակի, փառավոր մի ծնողի, որն իր շուրջն է հավաքում զավակներին.

Կիւն մի եստեր լոյժ փառաւոր,
Գետերմ ուեր շատ ։ առաւոր.
Կանաչ ճագիին գեղ զբաղաւոր
Ամենեցուն է ցանկաւոր20։

Թթենու վերաբերյալ հանելուկի միջոցով Շնորհալին սովորեցնում է այդ ծառի օգտակարությունը նաև շերամապահության տեսակետից, որը խոշոր նշանակություն է ունեցել ժամանակի արհեստների և տնտեսության համար։

Զայն ծառրն տես ու կու ծագկի.
Տերեն է իւրն գեղ բգկաշի.
Նարմով զգեստ մարդկան լինի,
Եիստ վայելուչ և ցանկալի21։

Ցորենին վերաբերող հանելուկները ցույց են տալիս, թե որքան չերմ է եղել Շնորհալու սերը գեպի հողն ու հողի աշխատավորը։ Ցորենն է կյանքի աղբյուրը, որին բանաստեղծը անվանում է «հոգու հոգի».

19 Մատենադարան, ձեռ. N 2961, էջ 237։
20 Նույն տեղում, ձեռ. N 7703, էջ 93։
21 Նույն տեղում, էջ 109—100բ։

Տեսայ զիմ հոգւոյս հոգին,
Որ մեռաւ ւ հող բաղեցաւ,
Դարձեալ իմ սիրոյս համար,
Ինքն յարեաւ ու շատ դատեցաւ,
Կամաւ նա ի սուր եկաւ,
Եւ քարամբ խիստ քարկոծեցաւ.
Ի գեհեան ի հուր մըտաւ,
Իմ հոգւոյս հոգին նա դարձաւ22:

Հասարակ աշխատավոր մարդու նկարագիրն է տրված «Ջիթացպան» կամ «Ջոթ» հանելուկում.

Ոմն բազմեալ ի հողէ ձի.
Եւ հանապազ ծափս հարկանի.
Հալաւ հագեր զարմանալի.
Թէ զինն ասես փող մի չարժի23:

Բազմաթիվ հանելուկների նյութը վերցված է կենդանական աշխարհից։ Այս կարգի հանելուկները ուսուցողական նպատակ հետապնդելուց բացի, ունեն նաև դաստիարակչական ու բարոյա-կրթական նշանակություն։ Կենդանիների մեջ ամենահզորն առյուծն է, նա

Գլուխ ունի զերդ զփրոց.
Աչուի ունի ինւն զերդ բոց,
Յորժամ խնդիր լինի որսոց,
Զերդ բազաւոր խուլրէ շատոց24:

Գայլը ագահ է, գող, «աչուի ունի զերդ կայծ տուող» և սարսափելի հափշտակող է։ Աղվեսը «խելօքն ծով է ու խիկար»։ «Խոզը տգեղ է, ծանրամարմին ու կեղտոտ», մինչդեռ մաքին, այծը մաքուր են իրենց մսով ու մազերով։ Այծի ու ոչխարի հասարակ եղջյուրներն անգամ օգտակար են մարդուն։

Թռչուններից էլ շատերը դարձել են հանելուկի առարկա։ Հիշենք դրանցից կաքավը, ծիտը, աքլորը, Թուխսը, բադը, արտույտը և այլն։ Սրանց մեջ ամենագեղեցիկը աքլորին վերաբերող հանելուկն է, որը սրամտության և բնական նկարագրի հետ միասին ունի նաև աշխույժ ռիթմ.

Մօրուք ունի ինք զերդ զլոց.
Ի ի գլուխն ունի զերդ զսղոց.
Կնիկ ունի ժ-ի հնգոց,
Եա ու այլ ընկեր ուզէ այնոց25:

Հետաքրքրական և իմաստալից են մրջյունին և մեղվին վերաբերող հանելուկները, որոնցով Շնորհալին նպատակ է ունեցել մարդկանց մեջ ուժեղացնել աշխատասիրության գաղափարը։ Այս հանելուկներում Շնորհալին ավելի ցայտուն կերպով է արտահայտել աշխատավոր մարդու մտքերն ու տրամադրությունները։ Մրջյունն իր համառ աշխատասիրությամբ հիշեցնում է հողագործ աշխատավոր մարդուն.

---

22 *Մատենադարան, ձեռ. № 7703, էջ 100բ։*
23 *Նույն տեղում, էջ 103։*
24 *Նույն տեղում, ձեռ. № 6045, էջ 177։*
25 *Նույն տեղում, էջ 180։*

Կարի տեսա ես շատ կարուան,
Որ կու իջնայր ի Խորասան.
Իշուին բոքիկ էր ու անփալան,
Մեկիկ հատիկ բստան ու գան26:

Մեղվին վերաբերող տպագրված հանելուկներից մեկը ձեռագրի համեմատությամբ էական փոփոխության է ենթարկվել և ստացել է կրոնական բնույթ, մինչդեռ ձեռագրում հանելուկը կրոնական ոչինչ չունի։ Ահա դրանք.

ա) ձեռագիրը.

Կարծաւոր փոքր և հրաշալի,
Զամէն շրջի յանապատի.
ՄԱՍՈՒՆՍ ԱՌՆԻ ՆԱ ԱՄԵՆԻ.
Յառաջ բերէ գործ ցանկալի27:

բ) տպագրվածը.

Կործաւոր փոքր և հրաշալի.
Զամէն շրջի յանապատի.
Յառաջ բերէ գործ ցանկալի.
ՈՐՈՎ ԱՍՏՈՒԱԾ ՓԱՌԱՒՈՐԻՆ28:

Մի քանի հանելուկների մեջ Շնորհալին քարոզում է սեր դեպի գիրն ու գիրքը, ուսումն ու մտավոր զարգացումը։ Այբուբենին վերաբերող հանելուկով Շնորհալին ուզում է գրագիտության հետ միասին սովորեցնել նաև հաշիվ, թվաբանություն.

Ի չորս տասնէն չորս էառ.
Զայլն երեք կացուց յերևան.
Ամէնն է տասը հազար,
Մէկ պակաս և այլն ի լման.
Ինքն բառակի փակեաց.
Որ ճարտար մարդիկն իմանան,
Զկեսն ԺԲ առնէ,
Որ տխմար մարդիկս չիմանան29։

Հետաքրքրական են «Թուղթ» և «Թանաք» հանելուկները։ Գրված թուղթը, չնայած անշունչ առարկա է, բայց կենդանություն ունի, քայլում է առանց ոտքերի, ամեն տեղ համարձակ մտնում ու խոսում է.

Է բանաւոր, չէ կենդանի.
Շատ գա ի շուրջ ոտոի չունի.
Ուր մեծատուն կա ու արքունի,
Նա համարձակ երթայ խօսի30:

Այս հանելուկի պատկերը, ինչպես տեսնում ենք, կազմված է կենդանի մարդու հետ համեմատելով, իսկ թանաքի նկարագիրը տալու համար հեղինակն իր համեմատությունները վերցրել է բնությունից և երկրագործական աշխատանքի հետ կապված առարկաներից ու գործիքներից.

26 *Ա լ ի շ ա ն. Բանք չափու, էջ 576։*
27 *Մատենադարան, ձեռ. № 7703, էջ 90։*
28 *«Բանք չափաւ», էջ 575։*
29 *Մատենադարան, ձեռ. № 695, էջ 413։*
30 *Նույն տեղում, ձեռ. № 6045, էջ 186։*

Սերմն սև ու ջրաց հոլով,
Դաշտըն հերկած սպիտակ բամբկով.
Ի հինգ յլածոն հարօրով,
Ի խուեանց վաստակն ընթանալով31:

Պարզ երևում է, թե ինչպես Շնորհալին ցանկանում է իր հանելուկներից ամեն մեկը այս կամ այն պատկերով ու առարկայով կապել շինական մարդու ամենօրյա աշխատանքի ու աշխատասիրության հետ։

Առանձնապես արժեքավոր են Շնորհալու այն հանելուկները, որոնք վերաբերում են գրասիրությանն ու ուսումնասիրությանը։ Գիրքն ու ուսումը զարգացնում են մարդու հոգեկան աշխարհը, առանձնապես՝ միտքը։ Վերջինս թռչում է արագ, վայրկենապես անցնում է երկրե-երկիր և մարդկանց կապում միմյանց։ Միտքը թռչող-թևավորների մեջ բոլորից, անգամ ծիծեռնակից արագ է թռչում.

Արդ է անբև և անփետուր,
Քան ըզծիծառն երթայ ի սուր.
Յերկրէ յերկիր շրջի թափուր,
Խառնայ ու գայ բերէ շատ հիւր32:

Մարդու մտքերը ձևակերպողը, արտահայտողը լեզուն է, որն ունի իր հատուկ դիտությունն ու արվեստը՝ քերականությունը։ Սովորողների համար Շնորհալին հանելուկի առարկա է դարձրել նաև քերականությունը, որը թեև փոքր, բայց շատ կարևոր գիտություն է.

Տեսի արհեստ մի ես փոքրիկ.
Յոյժ պիտանի և գեղեցիկ,
Ունէր յինքեան երկու դռնիկ
Ուրեակ բուով պատուհանիկ33:

Հանելուկում հիշված երկու դռներից մեկը, հավանորեն, ձևաբանությունն է, իսկ մյուսը՝ շարահյուսությունը, որոնց միջոցով մարդը ներս է մտնում և ծանոթանում այդ գիտությանը։ Իսկ ութ պատուհանները, ըստ երևույթին, խոսքի մասերն են։

Շնորհալին շատ է հետաքրքրվել բնական երևույթներով։ Այս բանի ապացույցներից մեկն էլ նրա «Յաղագս երկնից և զարդուց նորա» բնագիտական պոեմն է և բնության վերաբերող բազմաթիվ հանելուկները, որոնցից մի քանիսի մասին խոսեցինք վերևում։ Այստեղ ուզում ենք կանգ առնել նաև «Զայն» հանելուկի վրա։ Ըստ էության այս հանելուկն էլ իր բնույթով ու իմաստով ոչ մի կապ չունի կրոնի հետ։ Հայտնի է, որ աշխարհում գոյություն ունեցող բոլոր կրոնները (բուդդայական, հրեական, քրիստոնեական, մահմեդական և այլն) մարդու շունչը, ձայնը համարում են հոգու արտահայտություն, հոգի, որը, ըստ կրոնի, աստված դրել է մեր նախահայրը համարվող Ադամի մեջ. Բայց տեսնենք ինչպե՞ս է բնորոշվել այդ շունչը «Զայնը» հանելուկի մեջ.

31 Մատենադարան, ձեռ. № 6045, էջ 184։
32 Նույն տեղում։
33 Նույն տեղում, էջ 190։

Իր մի է ի յաշխարհի,
Զերկինս և զերկիր ի բռին ունի.
Յարարածոցս կերակրի,
Բերան և յարգանդ չունի.
Ադամայ է անդրանիկ
Յօրն դարևանս պիտանի
Բոզանացն սիրելի.
Եկեղեցեացն զարդ լինի.
Անհայր ու մայր ու մահ չունի
Վկայեաց որ չէ ինքն կենդանի[34]։

Ինչպես տեսնում ենք, այստեղ ձայնը ոչինչ չունի երկնային. այն աշխարհային մի երևույթ է։ Դեռ ավելին. կրոնը ձայնը միացնում է հոգու հետ, որը տալիս է մարդուն երկինքը, այդ նույն հոգի-ձայնը մահից հետո գնում է նույն երկինքը։ Հանելուկի մեջ, ընդհակառակը, երկինքն ու երկիրը գտնվում են «ձայնի բռի մեջ», ձայն, որ Ադամից էլ առաջ է գոյություն ունեցել, անսկիզբ է, անվերջ և անմահ, այսինքն՝ հավիտենական, ինչպես ինքը բնությունը։ Այն ժամանակներում, թեկուզ հանելուկի ձևով, «ձայն» հասկացությանն այսպիսի բացատրություն տալը բավական համարձակ և առաջադիմական քայլ էր։

Վերը բերվածներից բացի, հիշատակենք նաև աղի, աստղի, կանթեղի, գինու, սարդի, օձի, աղեղի, զրահի, մկրատի, նետի, հրահանի, եղնիկի, սնկի, սրտի, վարդի, թզի, կարկտի, մազի, ջրի, ծովի և գետի վերաբերյալ աշխարհիկ ուշագրավ հանելուկները, որոնց բոլորի նյութը Շնորհալին մեծ մասամբ վերցրել է իրական կյանքից, հայ ժողովրդի անգիր բանահյուսությունից և վարպետորեն մշակել՝ նույն ժողովրդին վերադարձնելու նպատակով։

НЕИЗДАННЫЕ ЗАГАДКИ НЕРСЕСА ШНОРАЛИ

Г. А. АКОПЯН

(Резюме)

Нерсес Шнорали своим творчеством тесно связан с народом. Любовь к армянскому народному фольклору особенно ярко выражена в его загадках. Хотя до сего времени считается, что Шнорали оставил только 120 загадок, однако в рукописях Матенадарана встречается около 300 загадок, принадлежащих его перу.

В противовес существующему до сих пор мнению о том, что Шнорали якобы писал загадки лишь четверостишиями, имеется множество примеров, показывающих, что он слагал свои загадки также в стихах от двух до тридцати и более строк.

Темы Нерсес Шнорали брал из реальной действительности средневековья и мастерски перерабатывал все, что было вычерпано из устного народного творчества. Своими загадками Шнорали внушал народу патриотизм, любовь к национальной культуре, к знаниям и трудолюбию.

[34] *Մատենադարան, ձեռ. № 695, էջ 415։*